

A 22.00.03  
7.79

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊՈՂՈՅԱՆ ՄԱՍԻՍ ՊՈՂՈՍԻ

ՀՏ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱՅԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ  
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ԻԲ.00.03 – «Միջին մակարդակի տնտեսություններ, սոցիալական կառույցներ, սոցիալական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2002

Ատենախոսության թմնան հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Հարությունյան Լ. Ն.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Հարությունյան Է. Ա.

սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մարգարյան Ա. Կ.

Առաջատար կազմակերպություն՝

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2002թ. դեկտեմբերի 26-ին ժամը 17.00-ին ԵՊՀ-ում, 013 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 375025 Երևան, Ալեք Մանուկյան 1, Երևանի պետական համալսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սնդագիրն առաքված է 2002թ. նոյեմբերի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝



*[Signature]*  
Չարարյան Ս. Ա.

3810-2002

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Տիմահարգի արդիականությունը: Մեր հասարակության գործառնության տարբեր ոլորտների ուսումնասիրությունները թույլ են տալիս ներկայացնել դրանցում առկա լուրջ հիմնախնդիրների մասին, որոնց սկզբնապատճառների թվում կարևոր տեղ են զբաղեցնում հասարակության կառավարման գործընթացի թերությունները: Պետության և հասարակության կառավարումը, մեծապես պայմանավորված լինելով քաղաքական էլիտայի գործառնությամբ, իր վրա է կրում քաղաքական էլիտայի դիսֆունկցիաների և թերությունների հետևանքները: Քաղաքական էլիտան ինքը պայմանավորված լինելով այլ էլիտա խմբերով և արտաքին գործոններով ձևավորվում և իր գործառնությունը է իրականացնում այդ ուժերի ազդեցության տակ, որոնք քաղաքական էլիտայի հետ միասին կազմում են Հայաստանի էլիտաների բարդ և նախաձեռնարկ: Քաղաքական էլիտայի, որպես նախաձեռնարկի կարևոր դերը հանրապետության հիմնախնդիրների լուծման համատեքստում, որտեղ այն կարող է բանալի հանդիսանալ, ավելի արդիական է դարձնում քաղաքական էլիտայի ուսումնասիրությունը:

ՀՀ անկախացման հետ հասարակության տարբեր ոլորտներում տեղի ունեցած համակարգային փոփոխություններ: Նման փոփոխություններ առկա են նաև կառավարման և քաղաքական ոլորտներում: Կառավարող խմբերում, դրանց ձևավորման մեխանիզմներում, կառուցվածքում և ֆունկցիաներում նման փոփոխություններն ավելացնում են քաղաքական էլիտայի մասին այն հարցերը, որոնց պատասխանը մենք դեռևս չունենք: Դառնալով ինքնակառավարվող հանրապետության համար առանձնահատուկ նշանակություն է ստանում, թե ովքեր են զբաղվում հանրապետության համար կարևորագույն որոշումների ընդունմամբ, ինչ սկզբունքներով են նրանք ընդունում այդ որոշումները, ինչ ուժեր են ազդում այդ որոշումների վրա և այլն: Այս առումով առավել արդիական և կարևոր է դառնում հանրապետության (արդեն որպես համամատարբար ինքնուրույն համակարգի) քաղաքական էլիտայի ձևավորման միտումների ուսումնասիրությունը, որը լույս կսփռի, թե ինչ ուժերի ազդեցության տակ, ում առաջնորդությամբ և ուր է շարժվում մեր հասարակությունը:

Տիմահարգի գիտական մշակվածության աստիճանը: Էլիտայի տեսություններն ունեն գարգացման շուրջ հարյուրամյա պատմություն: Մակայն նախքան էլիտայի ամբողջական հայեցակարգերի առաջ գալը, էլիտայի մասին գաղափարներն առկա են եղել դեռևս Հին Չինական փիլիսոփայության մեջ: Այդ գաղափարների վրա միայն 19-րդ դարի վերջերին կառուցվեցին ամբողջական հայեցակարգեր: Ձևավորման ընթացքում դրանք հասցրել են վերածվել տարբեր ուղղությունների և հոսանքների: Էլիտայի տեսություններում մոտեցումների բազմազանությունը հստակություն և միանշանակություն չապահովելով արգելակել է դրանց գարգացումը: Որպես հասարակության գործառնության շատ նրկային բացատրող տեսություններ, որոնք այս կամ

այն կերպ առնչվում են հասարակության տարբեր շերտերի և խմբերի՝ հասարակությունում ունեցած դերի և տեղի մեկնաբանություններին, էլիտայի տնտեսությունները գաղափարական հիմք են հանդիսացել տարբեր քաղաքական ուժերի համար, որոնք փորձել են ծառայեցնել դրանք իրենց նպատակներին:

Այսպիսով, պայմանավորված լինելով քաղաքական ազդեցություններով էլիտայի տնտեսությունները որոշակի գաղափարախոսությունների հետ հարմարեցնելու նպատակով հաճախ շեղվել են օբյեկտիվությունից: Նույն պատճառներով դրանք հաճախ կիրառվել են քարոզչական նպատակներով, ինչը հանգեցրել է դրանց որոշ ուղղությունների գիտականության պակասին: Այդ իսկ պատճառով այս տնտեսությունների համախմբումը, գտումը և գիտականացումը եղել է ժամանակատար և մինչև այժմ ունի շատ բացեր, որոնք կարիք ունեն ինչպես տնտեսական համալրման, այնպես էլ էմպիրիկ հետազոտություններում կիրառման:

Սկզբնական շրջանում հասկացությունների հայեցակարգերում ունենալով որոշ անորոշություններ՝ էլիտայի տնտեսությունները լուրջ դժվարություններ են ունեցել օպերացիոնալիզացիայի և սոցիոլոգիական հետազոտություններում կիրառման հետ կապված: Այդ իսկ պատճառով էլիտայի սկզբնական ուսումնասիրությունները հիմնականում որակական բնույթ ունեն: Որպես նման վերլուծության օրինակ կարելի է նշել Գ. Մոսկայի պատմահամեմատական վերլուծությունը տարբեր ներկրների էլիտաների վերաբերյալ, որտեղ նա փորձում է դիտարկել էլիտաների առանձնահատկությունները՝ կախված նրկրի քաղաքակրթությունից, կրոնից և մշակույթից: Նմանատիպ որակական վերլուծություններ են նաև Պարևոտյի, Միխլիսի, Օրտեգա ի Գասսետի և էլիտայի տնտեսությունների հիմնադիրների ու սկզբնական շրջանի հետազոտողների այլ աշխատանքներ: Այս հետազոտություններում փորձ չէր արվում առանձնացնելու հասարակության էլիտան, որպես կոնկրետ խումբ, որի մեջ ընդգրկված մարդկանց մասին այնուհետև կարելի կլիներ ինֆորմացիա հավաքել: Փոխարենը նման վերլուծություններն արվում էին մակրոմակարդակում և տնտեսական բնույթ ունեին, ինչի արդյունքում անհասանելի էր մնում էլիտայի հայեցակարգում առաջ քաշված շատ հիմնադրույթների ստուգումը: Մասնավորապես, չէին ստուգվում էլիտաների հանդեպ արժեքային մոտեցման հիմնադրույթները, և, արդյունքում, չէին տարաբաժանվում արժեքային և կառուցվածքաֆունկցիոնալ մոտեցումների կիրառման առանձնահատկությունները: Այս մոտեցումների շատ դրույթներ մնում էին դոգմայի կարգավիճակում: Նման վերլուծությունների մեծագույն արժանիքը կարելի է համարել այն, որ դրանց արդյունքում մշակվում էին էլիտայի հայեցակարգերում կիրառվող տարբեր հասկացություններ, որոնք հետագայում ավելի մեծացրին էլիտայի տնտեսությունների էմպիրիկ կիրառման հնարավորությունները:

Չնայած դրան՝ 70-ական, 90-ական թվականներին էլիտայի տնտեսությունները, ստանալով որոշ հիմնաքարային հարցերի լուծումներ, սկսեցին լայն կիրառություն գտնել սոցիոլոգիական հետազոտություններում: Այդ հարցերը ներառում էին էլիտայի տնտեսությունների և հասկացության համակարգի հայեցակարգային մակարդակից էմպիրիկ մակարդակ իջեցնելու և

սոցիոլոգիական հետազոտությունների համար նախապատրաստելու խնդիրներ: Այս ուղղությամբ առաջին քայլերն արվել են Տ. Դայի, Ա. Գիդդենսի և այլոց կողմից: Էլիտայի հայեցակարգերում հասկացությունների հստակեցումը և էմպիրիկ կիրառելիության հասցնելու միտումը հանգեցրեց այն բանին, որ աստիճանաբար գերիշխող դարձավ կառուցվածքային ֆունկցիոնալ մոտեցումը արժեքայինի հանդեպ և էլիտայի նեղ իմաստով ըմբռնումը՝ լայնի հանդեպ: Արդյունքում, սոցիոլոգիական տեսանկյունից առավել ընդունելի է դառնում կառավարող էլիտայի՝ որպես հասարակությունում փոքրամասնություն կազմող սոցիալական խմբի ըմբռնումը, որը հասարակության համար կարևոր որոշումների վրա մեծ ազդեցություն ունենալու շնորհիվ կառավարում է հասարակությունը: Այս առիթման համաձայն Միչիգանի համալսարանի պրոֆեսոր Մ. Էլդերսֆելդը կատարելով ԱՄՆ-ի, Անգլիայի, Շվեդիայի, Նիդերլանդների, Գերմանիայի, Իտալիայի և Ֆրանսիայի էլիտաների համեմատական հետազոտությունը՝ վերցնում է նշված ներկրներից յուրաքանչյուրից 1500 պաշտոնյաների և խորհրդարանականների: Այս ամենը ավելի հստակություն մտցնելով էլիտայի տնտեսություններում և լուծելով որոշ էմպիրիկ դժվարություններ՝ հնարավորություն տվեց էլիտայի սոցիոլոգիական հետազոտությունների, որոնք լայն տարածում գտան:

Նախկին ԽՍՀՄ տարածքում էլիտայի ուսումնասիրությունների հնդիսակները (Աշին, Նառաև և այլք) խորհրդային տարիներին բավարարվել են հիմնականում քննադատությամբ: Վերջին տասնամյակում մասնավորապես Աշինի կողմից կատարվեցին էլիտայի առաջին հետազոտությունները նախկին ԽՍՀՄ տարածքում, որին հետևեցին այլ սոցիոլոգիական հետազոտություններ: Այդ հետազոտությունները հիմնականում ունեն կառուցվածքաֆունկցիոնալ մոտեցում, ինչը խոսում է այս ուղղության համեմատաբար ավելի մշակված լինելու և կիրառելիության մասին: Չնայած դրան դեռևս չի մշակվել կամ էլիտայի տնտեսությունների հիմքի վրա ամբողջացվել այնպիսի հայեցակարգ, որը կարողանար լիարժեք բացատրել էլիտայի ձևավորման և գործունեության գործառնության իմաստը՝ բացահայտելով հասարակության տարբեր հատվածների համար էլիտայի նշանակությունը, փոխպայմանավորվածությունը և ձևավորման ու գործառնության գործընթացում դրանց դերը:

Նայատանում էլիտայի սոցիոլոգիական հետազոտությունները չունեն տնտեսական, գիտական նպատակներ և հիմնականում իրենցից ներկայացնում են գիտական առումով նրկու ծայրահեղություններ: Այդ հետազոտությունների մի մասն ունի տնտեսական բնույթ և ավելի շատ հարում է փիլիսոփայական կամ քաղաքագիտական վերլուծությունների, որոնք հաճախ հիմքում չունեն էմպիրիկ ինֆորմացիա: Մյուս հետազոտություններն իրենցից ներկայացնում են վարկանիշային ուսումնասիրություններ, կամ նախընտրական արշավների համար նախատեսված, նեղ ընտրաքաղաքային նպատակներ հետապնդող հետազոտություններ: Այս հետազոտությունները, հետապնդելով խիստ կիրառական նպատակներ, չեն հավակնում տնտեսական ընդհանրացումներ կատարել, ինչի հետևանքով չեն նպատարում էլիտայի հայեցակարգերի գարգացմանը: Նման խնդիրների առկայությունը արդիական է դարձնում

«Էլիտայի սոցիոլոգիայի», որպես միջին մակարդակի սոցիոլոգիական տնտեսության անհրաժեշտությունը:

Ամփոփելու համար հիմնահարցի գիտական մշակվածության քննարկումը պետք է նշել, որ այն ունի բավական մեծ բացեր կոնցեպցիայի մակարդակում, հասկացության համապատասխանության և տարբեր հեղինակների միջև փոխհամաձայնեցվածության բացակայության առումով, որն առաջացել է Էլիտայի տնտեսությունների բազմաթիվ ուղղությունների առկայության պայմաններում: Հասկացությունների նման բազմազանության պայմաններում հստակություն մտցնելու նպատակով շատ հեղինակներ կենտրոնանում են քաղաքական և բյուրոկրատական Էլիտաների վրա: Էլիտայի պրոբլեմատիկայի նեղացումը և կենտրոնացումը քաղաքական կամ բյուրոկրատական Էլիտաների վրա, ունենալով իր դրական կողմերը բերեց նաև իր թերությունները, քանի որ անտեսվում է այլ Էլիտար խմբերի առկայությունը և այլ ուժերի համատեքստը: Մինչդեռ հայնոցակարգերի հասկացության համակարգերի հստակեցումը և միաժամանակյա կիրառումը հնարավորություն կտար ցուցաբերել համակարգային մոտեցում, ինչը կնպաստեր հայնոցակարգերի փոխլրացմանը:

Անհրաժեշտ է նաև նշել, որ էմպիրիկ հետազոտությունների մակարդակում նույնպես առկա են պրոբլեմներ: Մասնավորապես հետազոտության մեթոդները, որ սովորաբար կիրառվում են Էլիտաների հետազոտությունների ժամանակ ունեն որոշակի միակողմանիություն այն առումով, որ հնարավորություն չեն տալիս ստուգել կոնցեպցիաներում առաջ քաշվող շատ թեզեր: Արդյունքում կոնցեպցիան ստուգվում է մասամբ: Դրա փոխարեն հետազոտության մեթոդների նման առանձնահատկությունները բերում են այն բանին, որ հետազոտությունների նպատակները համապատասխանեցվեն մեթոդների ընձեռած հնարավորություններին:

**Ատենախոսության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության նպատակն է պարզել ՀՀ քաղաքական Էլիտայի ձևավորման առկա միտումները, դրանց հետագա հնարավոր ընթացքը՝ կախված պայմանավորող գործոններից:  
Այս նպատակի իրականացման համար սույն աշխատանքում առաջ են քաշվում հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել սոցիոլոգիական և սոցիալ-փիլիսոփայական տնտեսությունները, որոնք անդրադառնում են Էլիտաների հիմնահարցին՝ նպատակ ունենալով վերհանել այդ տնտեսությունների հիմնական դրույթները, հստակեցնել Էլիտա հասկացության բովանդակությունը, մշակել քաղաքական Էլիտայի սոցիոլոգիական հետազոտության տնտեսական մոդել:
- Մշակել ՀՀ քաղաքական Էլիտայի սոցիոլոգիական հետազոտության մեթոդիկան:

- Ուսումնասիրել քաղաքական Էլիտայի ձևավորման ընթացքը Հայաստանում մինչև այսօր՝ նկարագրելու կոնկրետ Էլիտար խմբերը և դրանց փոխհարաբերությունները:
- Նկարագրել քաղաքական Էլիտայի կառույցը, հարաբերությունները այլ Էլիտար խմբերի հետ և գործառնությունը Հայաստանում, որոնց հետագա հնարավոր փոփոխությունների ուսումնասիրությունը մեզ անհրաժեշտ է կանխատեսելու Էլիտայի նյութահամակարգի հետագա զարգացումը:
- Վերհանել քաղաքական Էլիտայի ձևավորումը պայմանավորող հիմնական գործոնները Հայաստանում՝ պարզելու, թե ինչպես են դրանք ազդում քաղաքական Էլիտայի կառույցի, գործառնության և ձևավորման վրա:
- Հաշվի առնելով քաղաքական Էլիտայի ձևավորման վրա ազդող հիմնական գործոնները՝ կառուցել Էլիտայի ձևավորման կանխատեսման ֆոնը:
- Հաշվի առնելով կանխատեսման ֆոնը կանխատեսել, թե ինչպիսի փոփոխություններ են սպասվում քաղաքական Էլիտայի կառույցում՝ ձևավորման առկա միտումների պայմաններում:
- Հաշվի առնելով քաղաքական Էլիտայի ձևավորման միտումների բարենպաստությունը Հայաստանի համար՝ առաջարկել միտումների կարգավորման հնարավոր մեխանիզմներ, որոնց օգնությամբ կարելի է ստանալ քաղաքական Էլիտայի զարգացման ցանկալի ընթացք:

**Ատենախոսության մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:**

Աշխատանքի մեթոդաբանական հիմք են հանդիսացել արտասահմանում կատարված մի շարք հետազոտություններ քաղաքական Էլիտայի, դրա համալրման, կառույցի, գործառնության և առնչվող այլ թեմաների շուրջ: Աշխատանքի եզրակացությունների համար ինֆորմացիոն աղբյուր են հանդիսացել Հայաստանում անցկացված փորձագիտական հարցումները հասարակական, քաղաքական գործիչների, գիտական ասպարեզում Էլիտայի թեմային առնչվող մասնագետների, հասարակական-քաղաքական կյանքին հետևող և հետազոտող էքսպերտների և լրատվամիջոցներում համապատասխան թեմաներով զբաղվող մասնագետների հետ, Հայաստանի կառավարության և Ազգային Ժողովի կառույցը, գործունեությունը, համալրումը և կազմը ներկայացնող փաստաթղթեր և գրականություն, մամուլը: Գրականությունում ներառվել են ինչպես տարբեր հեղինակների աշխատությունների բնօրինակներն, այնպես էլ դրանց վերլուծությունները և քննադատությունները:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Ատենախոսությունը պարունակում է մի շարք նոր մոտեցումներ, գաղափարներ և սոցիոլոգիական հետազոտության արդյունքներ, որոնցից հիմնականը հետևյալն են՝

1. Առաջին անգամ կատարվել է էլիտա, քաղաքական էլիտա, կառավարող էլիտա և էլիտար խմբեր հասկացությունների համատեղ կիրառում միևնույն հասարակական համակարգում, ինչը թույլ է տվել էլիտան դիտարկել որպես կառույց և առանձնացնել դրա կառուցվածքային տարրերը:
2. Առաջին անգամ կատարվել է քաղաքական էլիտայի կառույցի վերլուծություն և դրա գործառնության վերլուծություն, որպես այդ կառույցի տարրերի միջև փոխհարաբերությունների, կամ գործառնությունների իրագործման արդյունք:
3. Քաղաքական էլիտայի կառույցի վերլուծության ժամանակ փորձ է արվել էմպիրիկ եղանակով առանձնացնել քաղաքական էլիտայի հիմնային սուբյեկտները:
4. Կիրառելով «էլիտայի հիմնային սուբյեկտ» հասկացությունը՝ առաջին անգամ կառուցվել է Հայաստանում էլիտայի գործառնության մոդելը, ինչը հնարավորություն է տալիս բացատրել նաև էլիտայի ննթախամակարգի զարգացման հիմնական միտումները:
5. Մշակվել է ՀՀ-ում գործող քաղաքական էլիտայի ազդեցիկության հաշվարկման մոդել:
6. Առանձնացվել են ՀՀ քաղաքական էլիտայի ձևավորումը պայմանավորող հիմնական գործոնները:
7. Առաջին անգամ մշակվել է էլիտայի ձևավորման վրա՝ այդ գործոնների ազդեցության մակարդակի թվային արժեքը ստանալու մեթոդ:
8. Առաջին անգամ կիրառելով էլիտայի ձևավորման գործոնային մոդելը՝ հնարավոր է դարձել կանխատեսել ՀՀ քաղաքական էլիտայի ձևավորման հետագա ընթացքը:
9. Աշխատանքի արդյունքում տրվել է ՀՀ քաղաքական էլիտայի ձևավորման պատմությունը, կառույցի և գործառնության փոփոխման առկա միտումները:

**Ատենախոսության տեսական և կիրառական արժեքը:**

Տեսական արժեք է ներկայացնում գրականության մեջ առաջին անգամ էլիտաների ննթախամակարգերի վերլուծությունը հիմնային սուբյեկտների հայեցակարգի կիրառմամբ, «էլիտա» հասկացության և դրա դրսևորումների բազմակողմանի վերլուծությունը կառուցվածքաֆունկցիոնալ մոտեցմամբ և քաղաքական էլիտայի կառուցվածքն ու գործառնությունը նկարագրող միջին մակարդակի սոցիոլոգիական տեսության կառուցվածքաֆունկցիոնալ մոտեցման նախադրյալների համակարգում ու տեսական դրույթների զարգացումը: Տեսական արժեք է ներկայացնում նաև գրականության մեջ առաջին անգամ էլիտայի ննթախամակարգը կազմող և էլիտայի սոցիոլոգիայի տեսական հիմք հանդիսացող այնպիսի հասկացությունների բազմակողմանի վերլուծությունը, ինչպիսիք են «կառավարող էլիտա», «քաղաքական էլիտա», «էլիտար խմբեր», «քաղաքական էլիտայի հիմնային սուբյեկտ», «ազդեցիկության արտաքին և ներքին գործոններ», «հիմնային սուբյեկտի մանիպուլյատիվություն», «քաղաքական

էլիտայի դիաֆունկցիոնալություն» և այլն: Աշխատանքում վերլուծված է նաև արժեքային մոտեցման մեջ հայտնի «կվազիէլիտա» հասկացության կառուցվածքաֆունկցիոնալ ըմբռումը, որպես «դիաֆունկցիոնալ էլիտար խմբեր»: Տեսական նման համակարգի կիրառումը թույլ է տվել պատասխանելու ոչ միայն քաղաքական էլիտայի նկարագիրը, այլև գործառնման և կառուցվածքի շատ առանձնահատկություններ:

Էլիտայի ձևավորման միտումները պայմանավորող գործոնների և դրանց ազդեցության մեխանիզմների իմացությունը հնարավորություն է տալիս մշակել և կիրառել էլիտայի ձևավորումը կարգավորող մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան ստանալ էլիտայի կառույցի և գործառնության ցանկալի մոդել Հայաստանում: Այդ խնդրի իրականացման առումով մեծ կիրառական նշանակություն ունի նաև աշխատանքում կիրառված հետազոտության մեթոդաբանությունը, որը կարող է հիմք հանդիսանալ նոր հետազոտությունների համար:

Աշխատանքի արդյունքում ստացված մի շարք եզրակացություններ նույնպես ունեն տեսական և կիրառական արժեք, որոնցից առավել աչքի է ընկնում Հայաստանում էլիտայի արտաքին հիմնային սուբյեկտների ազդեցիկության գերակշռումը մյուս հիմնային սուբյեկտներից, ինչպես նաև հասարակության լայն շերտերի ազդեցիկության ցածր մակարդակը: Այս երկու գործոնների և դրանք պայմանավորող գործոնների իմացությունը, հնարավոր է դարձնում գործնական քայլեր կիրառել այդ միտումների վրա ներազդելու համար:

**Ատենախոսության փորձարկումները:**

Ատենախոսությունը քննարկվել և նրաաշխատանքի է պաշտպանության Երևանի Պետական Համալսարանի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետի կիրառական սոցիոլոգիայի ամբիոնում:

Ատենախոսության հիմնական գաղափարները և դրույթները ներկայացվել են սոցիոլոգիայի ամբիոնի տեսական սեմինարների, «Սոցիալական կառուցվածք» ուսումնական դասընթացի, ինչպես նաև ատենախոսի գիտական հոդվածներում:

**Ատենախոսության կառուցվածքը:**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

**Ատենախոսության համառոտ բովանդակությունը:**

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտության հիմնախնդրի արդիականությունը և կարևորությունը, ներկայացված են հարցի գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, ընդգծված է ատենախոսության գիտական նորույթը, տեսական և կիրառական արժեքը:

Ատենախոսության առաջին գլխում «*Էլիտան որպես սոցիոլոգիայի ուսումնասիրության առարկա*», մշակված են էլիտայի տեսությունների հիմնադրույթները, էլիտայի հայեցակարգի սոցիոլոգիական ըմբռումը,

քաղաքական էլիտայի սոցիոլոգիական հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը:

**Առաջին գլխի առաջին ենթագլխում «Էլիտայի տնտեսությունների զարգացումը և հիմնադրությունները»**, նպատակ ունենալով մշակել էլիտայի տնտեսությունների հիմնադրությունները և սոցիոլոգիական հայեցակարգը՝ հեղինակը ներկայացնում է էլիտայի տնտեսությունների զարգացումը՝ շեշտադրելով այն հիմնական գաղափարների վրա, որոնք ժամանակի ընթացքում գտվել, հղկվել և ամրապնդվել են որպես հիմնադրություններ:

Առանձնացնելով էլիտայի տնտեսությունների զարգացման 4 փուլ՝ հեղինակը ներկայացնում է հիմնադրությունների զարգացման դինամիկան: **Առաջին փուլը** սկսվում է Հին Չինական և անտիկ փիլիսոփայական ուսմունքներում էլիտայի մասին գաղափարներից, որոնք համարվելով, կատարելագործվելով և ամբողջանալով, իրենց ավարտն են գտնում Պարստոյի, Մոսկայի, Միխելսի և էլիտայի այլ դասականների տնտեսություններում: **Երկրորդ փուլում** (20-ականների երկրորդ կեսից մինչև 40-ականների առաջին կես) ձևավորվում են էլիտայի տնտեսությունների ֆաշիստական և պաշտպանողական-արհեստակրատական տարբերակները, որոնցում գերակայում էր էլիտայի, որպես լավագույնների ընթացումը: **Երրորդ փուլում** (40-ականների երկրորդ կեսից մինչև 60-ականների վերջը) ամենամեծ ազդեցությունը ձեռք են բերում էլիտաների բազմակենտրոնության և կառուցվածքաֆունկցիոնալ տնտեսությունների:

Այստեղ հեղինակը ներկայացնում է էլիտայի, որպես լավագույնների վերոնշյալ ընթացմանը հակադիր, **կառուցվածքաֆունկցիոնալ** մոտեցման առաջացումը: Այս ուղղության հիմնական շեշտը դրվում է այն դրույթի վրա, որ էլիտան ամենաինչ էլ լավագույնները չեն, այլ նրանք, ովքեր որոշակի հատկանիշներ ունենալով շնորհիվ, կարևոր չէ լավ, թե վատ, հայտնվել են ազդեցիկ դիրքերում: Այս ուղղության զարգացման հետ համընթաց, զարգանում են նաև էլիտաների բազմակենտրոնության և վետո խմբերի տնտեսությունները: Այս տնտեսությունները պնդում են, որ էլիտան կառավարման գործընթացում ներկայացնում է հասարակության տարբեր խմբերի շահերը: Հետևաբար, էլիտայի տարբեր խմբեր, առաջնորդվելով սոցիալական տարբեր խմբերի շահերով, միմյանց հանդեպ անընդհատ մրցակցության մեջ են, ինչն ապահովում է ժողովրդավարություն:

Սակայն ներկայացնելով վերջին **չորրորդ փուլը** (70-ականներից մինչև 90-ականներ) հեղինակը նկարագրում է էլիտայի բազմակենտրոնության տնտեսություններին հակադրվող **նեոէլիտիստական** ուղղությունը: Մասնավորապես նեոէլիտիզմի հիմնական գաղափարը հիմնվում էր Ռ. Միխելսի «օլիգարխիայի երկաթյա օրենքի» վրա, որը նեոէլիտիստները տարածում էին ողջ հասարակության վրա, և դրանով հիմնավորում ժողովրդավարության անհնարինությունը:

**Ամփոփելով վերոնշյալը՝ հեղինակը ներկայացնում է էլիտայի սոցիոլոգիայի հիմնադրությունները՝**

1. Զաղաքական էլիտայի սոցիոլոգիական վերլուծությունը հիմնվում է ոչ թե արժեքային, այլ կառուցվածքաֆունկցիոնալ մոտեցման վրա:

2. Էլիտան, որպես որոշ չափանիշներով առավել բարձր սոցիալական դիրք ունեցող և տվյալ հասարակությունում փոքրամասնություն կազմող սոցիալական խումբ, անխուսափելի է ցանկացած հասարակությունում:
3. Էլիտային հատուկ են անընդհատ թարմացման, համարման և գտման գործընթացները, որոնց ժամանակ որոշակի հատկանիշներով և կարողություններով մարդիկ հասարակության ստորին շերտերից վեր են բարձրանում դեպի էլիտան, իսկ էլիտայից ներքև են իջնում այն մարդիկ, որոնք սպառել են իրենց համապատասխան հատկանիշները:
4. Այն հատկանիշները, որոնք նպաստում են էլիտայի շարքերում հաստատվելու, կախված են ժամանակաշրջանից, տեխնոլոգիաներից, սոցիալական և մշակութային համակարգից և անպայման չէ, որ արժեքային տեսանկյունից լինեն դրական կամ նպաստեն էլիտայի ֆունկցիոնալությանը:
5. Որքան ավելի դանդաղ է կատարվում էլիտայի թարմացումը, այնքան ավելի թույլ են նրա դիրքերը, և մեծ է վտանգը, որ այն ամբողջությամբ կփոխարինվի մեկ այլ էլիտայով:
6. Սոցիալական խմբերը կամ հանրություններն ընտրում են լիդերներ, ակնկալելով, որ նրանք, մտնելով քաղաքական էլիտայի շարքեր, պետք է ներկայացնեն այդ խմբերի շահերը, այսպիսով ապահովելով ներկայացուցչական ժողովրդավարություն:
7. Սակայն, ինչպես կազմակերպությունների մասին պնդում է Միխելսի «օլիգարխիայի երկաթյա օրենքը», այնպես էլ ողջ հասարակության մակարդակում, ժողովրդավարությունը ձայնագրվում է, քանի որ էլիտան հասնելով իշխանության, արդեն դառնում է նոր շահերի կրող և հետևում իր նոր դիրքին համապատասխան շահերի իրականացմանը:

**Ելնելով վերոնշյալ դրույթներից՝ հեղինակը բխցնում է էլիտայի սոցիոլոգիայի երկու հիմնական հարցերը՝**

1. Որոնք են այն հատկանիշները, որ հնարավորություն են տալիս մարդկանց ընդգրկվելու էլիտայում և ինչպիսի պայմանների դեպքում են դրանք նպաստում քաղաքական էլիտայի ֆունկցիոնալությանը:
2. Ինչպիսի պայմանների դեպքում է հնարավոր հասնել այն բանին, որ «կազմակերպությունների երկաթյա օրենքը» չգործի և առաջանա էլիտաների բազմակենտրոն համակարգ, որը կապահովի ժողովրդավարություն:

Այսպիսով, հեղինակը ստանում է էլիտայի սոցիոլոգիայի հիմնադրությունները և հիմնական հարցերը, որոնց վրա կարելի է կառուցել էլիտայի սոցիոլոգիական հետազոտությունների տեսական մոդելներ:

**Առաջին գլխի երկրորդ ենթագլխում «Զաղաքական էլիտայի սոցիոլոգիական հետազոտության տեսական հիմքերը»**, նվաճելով էլիտայի սոցիոլոգիայի հիմնադրություններից, հեղինակը նպատակ ունի կառուցել

քաղաքական էլիտայի սոցիոլոգիական հետազոտության հասկացության համակարգը և դրա գործառնության տեսական մոդելը, որ կարելի կլինի օպերացիոնալիզացնել և հնարավորություն կտա պատասխանել էլիտայի սոցիոլոգիայի հիմնական հարցերին:

Սկզբում հիմք ընդունելով կառուցվածքաֆունկցիոնալ մոտեցման դրույթները՝ սահմանվում է «քաղաքական էլիտա» հասկացությունը և դրա առանձնացման չափանիշները՝ Հայաստանում: Այնուհետև կառուցվել է էլիտաների ենթահամակարգի վերլուծության մոդելը՝ հնդիսակը սահմանում և մանրամասն քննարկում է մոդելում տեղ գտած նախկինում գործածվող մի շարք հասկացություններ, ինչպես նաև որոշ նոր հասկացություններ, որոնք հետագայում կարևոր նշանակություն են ստանում էլիտաների ենթահամակարգի վերլուծության համար:

Մասնավորապես անցնելով էլիտայի սոցիոլոգիայի ներկրորդ հարցի տեսական մասի լուծմանը՝ հնդիսակը վերցնում է էլիտաների բազմակենտրոնության հայեցակարգը և հաշվի առնելով կազմակերպությունների նրկաթյա օրենքը՝ դիտարկում է այն դեպքերը, երբ հնարավոր կլինի ապահովել ժողովրդավարություն: Այդ նպատակով առանձնացնելով քաղաքական էլիտայի ենթահամակարգի կառուցվածքային տարրերը՝ հնդիսակը սահմանում է քաղաքական էլիտայի և իշխանության հիմնային սուբյեկտների հասկացությունները: Քաղաքական էլիտայի հիմնային սուբյեկտներն այն սոցիալական խմբերը կամ հանրություններն են, որոնց վրա հենվելով և որոնց աջակցությունը ստանալով էլիտայի անդամները, էլիտար խմբերը կամ էլիտան ստանում են ազդեցիկություն կամ պահպանում այն: Իշխանության հիմնային սուբյեկտներն այն սոցիալական հանրություններն են, որոնց շահերի տեսանկյունից գործում է քաղաքական էլիտան: Փաստորեն այն դեպքում, երբ հանրությունն աջակցում են էլիտային և հանդիսանում են ազդեցիկության գործոն, դրանք կարելի է դիտարկել որպես քաղաքական էլիտայի հիմնային սուբյեկտներ: Իսկ երբ դրանք էլիտայի գործունեության վերահսկման միջոցով իրականացնում են իրենց շահերը, հանդիսանում են իշխանության հիմնային սուբյեկտ: Ելնելով վերոնշյալից՝ հնդիսակը սահմանում է, որ ժողովրդավարության մեխանիզմը կարող է գործել այն ժամանակ, երբ քաղաքական էլիտայի բոլոր ներքին հիմնային սուբյեկտները որքանով աջակցում են քաղաքական էլիտային, նույնքանով հանդիսանում են նաև իշխանության հիմնային սուբյեկտ: Մակայն այստեղ հնդիսակը նշում է, որ խոսքն ուղղահայաց ժողովրդավարության մասին է, երբ սոցիալական խմբերն ունեն տարբեր հնարավորությունները՝ ազդելու կառավարման գործընթացի վրա և պաշտպանելու իրենց շահերը:

Այսպիսով, հնդիսակը նպատակ է դնում ժողովրդավարական էլիտայի հնարավորությունը ստուգել՝ ելնելով այն բանից, թե ինչպիսի պայմաններում և ինչպես է հնարավոր հիմնային սուբյեկտների կողմից քաղաքական էլիտայի գործունեության վերահսկում:

Անցնելով էլիտայի սոցիոլոգիայի ներկրորդ հարցի տեսական մասի լուծմանը՝ հնդիսակը խնդիր ունի կառուցելու տեսական մոդելն այնպես, որ հնարավոր լինի պարզել այն հատկանիշները, որոնք հնարավորություն են

տալիս մարդկանց ընդգրկվելու էլիտայում և այն պայմանները, որոնց դեպքում դրանք նպաստում են քաղաքական էլիտայի ֆունկցիոնալությանը: Քաղաքական էլիտայի ազդեցիկությանը նպաստող գործոնները հնդիսակը բաժանում է երկու մասի՝ անվանելով դրանք **ազդեցիկության արտաքին և ներքին գործոններ**:

**Ազդեցիկության ներքին գործոնները** սուբյեկտի անձնական միջոցները, առանձնահատկությունները և որակներն են, որոնք տվյալ պատմական ժամանակահատվածում հնարավորություն են տալիս էլիտային առավել հաջողությամբ տիրապետել **ազդեցիկության արտաքին գործոններին**: Քաղաքական էլիտայի **ազդեցիկության արտաքին գործոնները** նրա՝ դրսից, արտաքին ուժերի կողմից ստացած աջակցության աղբյուրներն են:

Այսպիսով, պատասխանելու համար էլիտայի սոցիոլոգիայի առաջին հարցին՝ անհրաժեշտ է պարզել, թե որոնք են քաղաքական էլիտայի ազդեցիկության արտաքին և ներքին գործոնները և թե ինչպիսի պայմանների դեպքում ազդեցիկության ներքին գործոնները կլինեն մարդկային գործունեության, կարողությունների և բնավորության այնպիսի հատկանիշներ, որոնք կնպաստեն քաղաքական էլիտայի ֆունկցիոնալությանը:

**Առաջին գլխի նրբորդ ենթագլխում՝ «Քաղաքական էլիտայի սոցիոլոգիական հետազոտության մեթոդիկան»**, տրված է աշխատանքի հիմքը հանդիսացող տեսական մոդելի հիման վրա քաղաքական էլիտայի հետազոտության մեթոդաբանությունը:

Քննարկելով քաղաքական էլիտայի բացահայտման նրկք հիմնական մեթոդները՝ դիրքային կամ ստատուսային վերլուծություն, ռեպուտացիոն վերլուծություն և որոշումների ընդունման գործընթացի վերլուծություն, հնդիսակը նպատակահարմար է համարում ՀՀ-ի դեպքում օգտագործել ռեպուտացիոն մեթոդը: Ռեպուտացիոն մեթոդի իրականացման համար անհրաժեշտ փորձագետների ընտրությունը կատարվում է ձևակույտի մեթոդով: Նկարագրելով փորձագիտական հարցման մեթոդիկան՝ հնդիսակը քննարկում է հարցաթերթի հարցերը և դրանց մշակման նղանակները՝ մեկնաբանելով, տեսական մոդելի հասկացությունների օպերացիոնալիզացիան և արտահայտումը համապատասխան հարցերում:

Այսպիսով, ներկայացվում է հարցման արդյունքների ու կիրառված տեսական մոդելի համադրման նղանակը՝ քայլ առ քայլ նշելով, թե ինչպիսի հարցերի միջոցով են լուծվում տեսական մոդելի էմպիրիկ ստուգման խնդիրները: Արդյունքում առանձնացնելով և չափելով ազդեցիկության արտաքին և ներքին գործոնները՝ ստացվում է քաղաքական էլիտայի և հիմնային սուբյեկտների ազդեցիկության, ինչպես նաև հիմնային սուբյեկտների մանիպուլյատիվության չափման նոր մեթոդ:

Այնուհետև ներկայացնելով քաղաքական էլիտայի զարգացման կանխատեսման **մեթոդաբանությունը**՝ բացատրվում է տրենդային և գործոնային մեթոդների համադրված կիրառությունը աշխատանքում: Միևնույն ժամանակ ներկայացվում են հարցաթերթի համապատասխան հարցերը, որ օգտագործված են կանխատեսման ֆունկցիոնալ կառուցման նպատակով: Գործոնային կանխատեսման համար առանձնացնելով գործոնների նրկք մակարդակ,

որոնցից յուրաքանչյուրի փոփոխությունը հանգեցնում է իր հաջորդի փոփոխության՝ հնդինակը տրենդային եղանակով կանխատեսելով փոփոխություններն առաջին մակարդակում բխեցնում է հնարավոր փոփոխությունները մյուսներում: Այսպիսով հնդինակը ստանում է նաև արժեքային կանխատեսման հնարավորություն, երբ ունենալով քաղաքական էլիտայի ցանկալի նկարագիրը բխեցվում են այն պայմանները, որոնց դեպքում քաղաքական էլիտան կունենան նման նկարագիր:

Այսպիսով հնդինակի վերլուծությունը ցույց է տալիս, որ կան բոլոր նախադրյալները՝ հայնցակարգ և այդ հայնցակարգի նկատմամբ կիրառելի սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդներ, «էլիտայի սոցիոլոգիայի», որպես միջին մակարդակի սոցիոլոգիական տևություն կայացման համար:

*Երկրորդ գլխում «ՀՀ ժամանակակից քաղաքական էլիտայի վերլուծությունը»*, նկարագրվում է ՀՀ քաղաքական էլիտայի առանձնահատկությունները՝ ձևավորումը, կառուցվածքը, գործառնությունը և համալրումը:

*Երկրորդ գլխի առաջին ենթագլխում «Ժամանակակից քաղաքական էլիտայի ձևավորումը. պատմահամեմատական վերլուծություն»*, ներկայացվում է Հայաստանի ժամանակակից քաղաքական էլիտայի ձևավորման պատմությունը՝ շնչադրելով 80-ականներից մինչև 2002թ-ի գործընթացները: Հաշվի առնելով տարբեր ժամանակահատվածներում քաղաքական էլիտայի ձևավորման առանձնահատկությունները՝ տարանջատվում են քաղաքական էլիտայի ձևավորման տարբեր փուլեր: Նկարագրելով էլիտայի ձևավորման առաջին փուլը՝ հնդինակը այդ գործընթացի արմատները դիտարկում է սկսած դեռևս 60-80-ականների դիսիդենտական շարժումներից: Այնուհետև առանձնացվում է 88-90-ականները որպես քաղաքական ժամանակակից փուլ, երբ քաղաքական գործիչների՝ ավելի կատարյալ հասարակություն կառուցելու գաղափարները հեշտությամբ արձագանք ու աջակցություն էին ստանում ժամանակակից հակված հասարակությունում: Նման գաղափարներով ձևավորվող ազգային քաղաքական էլիտան հաստատվելով նոր իշխանություններում գրեթե ամբողջությամբ ներկայացված էր առաջին խորհրդարանում, որի սոցիոլոգիական պատկերի վերլուծությունը հնարավորություն է տալիս դիտարկել նաև նախկին խորհրդային նոստալգիայի անցումը նոր էլիտայի կազմ: Ընդ որում այդ անցումն առկա էր ոչ միայն քաղաքական ոլորտում, այլև տնտեսական, ռազմական բյուրոկրատական և այլ ոլորտներում, ինչը խոսում է այն մասին, որ տեղի է ունեցել ոչ թե էլիտայի շրջափոխություն, այլ փոխակերպում:

Հաջորդ փուլն աչքի է ընկնում ժամանակակից տրամադրությունների նահանջով և ավելի պրագմատիկ շրջանի ի հայտ գալով, որին արդեն հատուկ է քաղաքական էլիտայի կողմից ժողովրդի մանիպուլյացիան, ամբոխավարությունը և իշխանության համար պայքարը քաղաքական տարբեր ուժերի միջև: Ռոմանտիզմից պրագմատիզմին անցման կարևոր պատճառներից էր իշխանության արժեքի մեծացումը և գերակայությունը այլ արժեքների և գաղափարների հանդեպ մի կողմից և հասարակության հիպոթեզային իշխանություններից ու չիրականացվող

գաղափարախոսությունից՝ մյուս կողմից: Այնուհետև նկարագրվում է գործադիր իշխանությունների և այլ էլիտար խմբերի միջև փոխհարաբերությունների փոփոխությունները և առաջինների՝ կարևոր նշանակություն և դեր ստանալու գործընթացը՝ սկսած 1994-95-ից, որոնց աջակցությունն առավել կարևոր էր դառնում քաղաքական իշխանության գալու համար: Ենթագլխի վերջում նկարագրվում է դարաբաղյան գործոնի հետևանքով տեղի ունեցող փոփոխությունները և դրանց վերջնական դրսևորումները ՀՀ նոր քաղաքական էլիտայում:

Այսպիսով հնդինակը պատմական ակնարկի միջոցով նկարագրում է քաղաքական էլիտայի ձևավորման գործընթացը ՀՀ-ում՝ շնչադրելով այդ գործընթացի վրա ազդող ուժերի, մասնավորապես հիմնային սուբյեկտների ազդեցության դրսևորումները ՀՀ քաղաքական իրականությունում:

*Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում «ՀՀ էլիտաների կառուցվածքը»*, ներկայացվում են ՀՀ-ում առկա էլիտար խմբերը, դրանց քաղաքականությունը և դրանց միջև առկա կապերը:

Որպես ՀՀ-ում առկա հիմնական էլիտար խմբեր առանձնացվում են զինվորական, տնտեսական, բյուրոկրատական, գիտամշակութային և քաղաքական էլիտաները, որոնց մի մասը կազմում է երկրի կառավարող էլիտան:

Նկարագրելով զինվորական էլիտայի առաջացումը՝ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում 1988-ից սկսված Ղարաբաղյան շարժման և ռազմական գործողությունների հետևանքով զինվորական ոլորտի կարևորության մեծացմանը և առաջացող նոր զինվորական էլիտար խմբերին: Հաշվի առնելով նաև նախկին ՀԽՍՀ բարձրաստիճան զինվորականությունը՝ առանձնացվում է զինվորական էլիտայի երկու հիմնական մեծ խումբ՝ Ղարաբաղյան պատերազմի զինվորական էլիտա և ՀԽՍՀ զինվորական էլիտա: Միևնույն ժամանակ ըստ ծագման զինվորական էլիտան բաժանվում է Ղարաբաղյան և Հայաստանյան էլիտաների, որոնք երկուսն էլ մեծ դեր և ազդեցություն ունեն ՀՀ զինվորական էլիտայի հիերարխիայում:

Խոսելով զինվորական և տնտեսական էլիտաների փոխկապակցվածության մասին՝ նշվում է զինվորականության՝ տնտեսական ոլորտում վերահաստատման երևույթի մասին, որը զինվորական էլիտայի փոխակերպում է տնտեսականի, իսկ այնուհետև՝ նաև քաղաքական էլիտայի: Տնտեսական էլիտան իր հերթին բաժանվում է նախկին ՀԽՍՀ նոստալգիայից փոխակերպված մասի, սմիականաշնորհման հետևանքով առաջացած նոր խմբերի և արտասահմանյան ներդրումների հետևանքով տնտեսական էլիտա մտած նոր խմբերի: Այնուհետև վերլուծվում է գիտամշակութային էլիտայի ազդեցության անկումը՝ պայմանավորված անցումային շրջանով և այս ոլորտի էլիտայի ներկայացուցիչների ստատուսային քաղաքիչների անհամաչափությամբ: Բյուրոկրատական էլիտայի ձևավորման վերլուծության ժամանակ որպես կարևոր նշանակություն ունեցող ժամանակաշրջաններ, որոնք առանձնահատուկ հետք են թողել այդ գործընթացի վրա, առանձնացվում են խորհրդային Հայաստանի բյուրոկրատիայի անցումը ՀՀ էլիտայի և բյուրոկրատական էլիտայի

փոփոխությունները կապված իշխանափոխության հետ: Ուշադրություն է դարձվում այն փաստի վրա, ՀՀ-ում բյուրոկրատական էլիտան համարվում է ոչ թե արհեստավարժության, այլ քաղաքական պատկանելության սկզբունքներով:

**Ընչտաղընչով բյուրոկրատական, տնտեսական, զինվորական էլիտաների միախառնվածության և հանցավոր ոլորտների հետ համագործակցության նրկայիցը ներկայացվում է էլիտաների ննթահամակարգում կլաններին առկայության մասին, որոնք իրենցից կարևոր ուժ են ներկայացնում և հաճախ որոշիչ են քաղաքական էլիտայի համարման և գործառնության հարցերում:**

Նկարագրելով քաղաքական էլիտայի կառավարող էլիտայում ունեցած դերը՝ նախ առաջ է քաշվում քաղաքական էլիտայի առանձնացման խնդիրը, որի համար վերլուծվում են փորձագիտական հարցումների արդյունքները: Ստանալով ազդեցիկության գործոնների կշիռները և ազդեցիկության ցուցանիշները քաղաքական էլիտայի յուրաքանչյուր ներկայացուցչի համար՝ վերլուծության են ենթարկվում ՀՀ առաջին ազդեցիկ 30 քաղաքական գործիչներն՝ ըստ իրենց ազդեցիկության ցուցանիշների: Այդ վերլուծությունը հնարավորություն է տալիս տեսնելու, թե ինչ ուժերի և ռեսուրսների վրա է հենվում քաղաքական էլիտան իշխանության համար պայքարում և ինչպիսին է քաղաքական էլիտայի և տնտեսական, բյուրոկրատական, զինվորական ու գիտամշակութային էլիտաների փոխկապակցվածությունը: Ազդեցիկության գործոնների թվային մեծությունների առանձնացման հիման վրա ձևավորվում է քաղաքական էլիտայի վերլուծության ներկայացուցչական մոդել:

Այսպիսով հեղինակը ստանում է ՀՀ էլիտաների համակարգի կառուցվածքը, որտեղ ներառված են հիմնական էլիտար խմբերը, որոնք ազդեցություն ունեն կառավարման որոշումների վրա:

**Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում «ՀՀ քաղաքական էլիտայի գործառնությունը և համարման գործոնները»**, համաձայն էլիտայի ներկայացուցչական մոդելի, ներկայացվում է այն հիմնական ուժերի էլիտար խմբերի և այլ հանրությունների համեմատական վերլուծությունը, որոնք պայմանավորում են էլիտայի համարումը, ձևավորումը և գործառնությունը: Այդ նպատակով առանձնացվում են զինվորական, տնտեսական, գիտամշակութային, բյուրոկրատական էլիտաները, հասարակության լայն շերտերը, ՌԴ-ն, Արևմուտքը և Սփյուռքը, որպես ՀՀ էլիտայի ձևավորման և գործառնության վրա ազդող հիմնական ուժեր, որոնց վրա հենվելով քաղաքական էլիտան ծավալում է իր գործունեությունը: Այդ ուժերի ազդեցիկությունից է կախված, թե ինչպիսի գործունեություն կծավալի և ինչպիսին կլինի քաղաքական էլիտան, քանի որ այն ստանալով հիմնային սուբյեկտների աջակցությունը, օգտագործելով ռեսուրսները՝ համարատասխանաբար պարտավորվում է այդ ռեսուրսների դիմաց ներկայացնել այդ սուբյեկտների շահերը: Սակայն ՀՀ փորձը ցույց է տալիս, որ քաղաքական էլիտան միշտ չէ, որ փոխհատուցում է հիմնային սուբյեկտներին և լիարժեք ներկայացնում նրանց շահերը: Փորձագիտական հարցման հիման վրա այստեղ ուշադրություն է դարձվում նրկու փաստի վրա, որքան աջակցություն է քաղաքական էլիտան ստանում հիմնային սուբյեկտից և

որքան է այդ հիմնային սուբյեկտների ազդեցությունը ՀՀ-ում: Արդյունքում պարզվում է, որ ՀՀ-ում առավել ազդեցիկ հիմնային սուբյեկտներ են տնտեսական, բյուրոկրատական էլիտաները, ՌԴ-ն և Արևմուտքը, իսկ զինվորական էլիտայի ազդեցիկությունը գնալով նվազում է պատերազմից հետո: Սակայն քաղաքական էլիտան իր ազդեցությունն իրականացնելիս հենվում է նաև գիտամշակութային էլիտայի, հասարակության լայն շերտերի և Սփյուռքի վրա՝ ստանալով նրանց աջակցությունը: Մինչդեռ այս հիմնային սուբյեկտները, իրենց ապահոված ռեսուրսների և ստեղծած ազդեցիկության համեմատ, ավելի քիչ իրական ազդեցություն ունեն ՀՀ քաղաքական որոշումների ընդունման գործընթացում: Ելնելով դրանից հեղինակը ներկայացնում է, որ այդ հիմնային սուբյեկտները մանիպուլյացիայի են ենթարկվում քաղաքական էլիտայի կողմից՝ շահագործվում և ըստ արժանվույն չեն փոխհատուցվում, ինչը Միլենյաի «օլիգարխայի նրկաթյա օրենքի» բացահայտ դրսևորում է ողջ հասարակության մակարդակով: Մինչդեռ ՌԴ-ն և Արևմուտքն ունեն բավականին մեծ ազդեցություն ՀՀ-ում որոշումների ընդունման գործընթացում: Այսպիսով, առաջանում են տարբեր մանիպուլյատիվությամբ հիմնային սուբյեկտներ, որոնցից առավել բարձր մանիպուլյատիվություն ունեն հասարակության լայն շերտերը, գիտամշակութային էլիտան և սփյուռքը:

Այսպիսով ներկայացվում է, որ ՀՀ-ում ժողովրդավարությունը ձևավորված է, քանի որ քաղաքական էլիտան կառավարում է նրկիրը՝ նլնելով ոչ թե հասարակության լայն շերտերի, այլ տնտեսական և բյուրոկրատական էլիտաների, արտաքին ուժերի և իր սեփական շահերից: Նման իրակիճակը պայմանավորված է այն բանով, որ հասարակության լայն շերտերի ազդեցությունը քաղաքական էլիտայի վրա խիստ փոքր է, մինչդեռ տնտեսական, բյուրոկրատական էլիտաները և արտաքին ուժերն առավել ինտենսիվությամբ են ազդում քաղաքական էլիտայի վրա:

**Երկրորդ գլխի չորրորդ ենթագլխում «ՀՀ քաղաքական էլիտայի և կոնտրէլիտայի դիսֆունկցիոնալությունը»**, ներկայացված է էլիտայի և կոնտրէլիտայի ֆունկցիոնալությունը հասարակության համար և թե ինչպես են կվազիէլիտան և կոնտրէլիտան դրոևորվում ՀՀ-ում կառուցվածքաֆունկցիոնալ վերլուծության ժամանակ: Նշվում է, որ ժողովրդավարական արժեքների տեսանկյունից կվազիէլիտան որոշելիս պետք է հիմնվել էլիտայի դիսֆունկցիոնալության գաղափարի վրա: Այնուհետև, նկարագրելով դիսֆունկցիոնալ էլիտար խմբերը ՀՀ-ում առանձնակի ուշադրություն է դարձվում կլանային, մաֆիոզ կառույցների գործառնության վրա: Տեղիակը նշում է, որ էլիտայի մնացյալ մասում դժվար է հստակ սահմանագատել դիսֆունկցիոնալ էլիտար խմբերը էլիտայի ֆունկցիոնալ մասից այն առումով, որ տարբեր էլիտար խմբեր ունեն որոշակի թերություններ իրենց գործունեության մեջ, իննն դրանք միտումնավոր թե ոչ, և արդյունքում նրանք այս կամ այն չափով դիսֆունկցիոնալ են: Այդ պատճառով, պարզելու համար էլիտայի գործառնության արդյունավետությունը, ներմուծվում է դիսֆունկցիոնալության կամ կվազիէլիտարության գործակիցը, որը ցույց է տալիս, թե այս կամ այն

էլիտայի ներկայացուցչի գործունեությունը որքանով է գործառության ժողովրդավարական արժեքների տեսանկյունից:

**Քննարկելով կոնտրէլիտան ՀՀ-ում ուշադրություն է հրավիրվում այն փաստի վրա, որ կոնտրէլիտայի առանձնացումը ըստ գաղափարախոսության ՀՀ-ում չի արտացոլում իրական պատկերը, քանի որ էլիտաը խմբերը որպես իրենց գործունեության առաջնային արժեք ունեն ոչ թեմ գաղափարախոսությունը, այլ իշխանությունը:** Այս առումով կոնտրէլիտան այն էլիտաը խմբերն են, որոնք ֆորմալ իշխանություններին դնել են գնում ոչ միայն իրենց գաղափարախոսության համար, այլ նաև իշխանության հասնելու կամ ավելի ստույգ ֆորմալ իշխանության լծակներին ավելի մոտենալու համար: Ընդ որում հնդիմակի վերլուծությունը ցույց է տալիս, որ կոնտրէլիտան հիմնականում պատրաստ է լայն համագործակցության ֆորմալ իշխանությունների հետ ամենատարբեր հարցերում ոչ թեմ գաղափարախոսական փոխզիջումների ակնկալիքով, այլ իշխանության լծակներին ավելի մոտ կանգնելու համար: Արդյունքում ներկայացվում է, որ կոնտրէլիտան հաճախ հանդիսանում է կնիծ կոնտրէլիտա է չի կատարում իշխանություններին զսպելու իր ֆունկցիան:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչպիսին պետք է լինի կոնտրէլիտան, որպեսզի հասնի իշխանության ՀՀ պայմաններում կատարվում է էլիտայի կոնտրէլիտարության և կվազիէլիտարության գործակիցների համադրություն և համեմատություն ազդեցիկության գործակիցների հետ: Համեմատությունը ցույց է տալիս, որ որքան դիսֆունկցիոնալ է էլիտայի ներկայացուցիչն, այնքան ավելի մեծ ազդեցություն ունի նա, ինչը պայմանավորված է հասարակական համակարգով, որ խրախուսում է դիսֆունկցիոնալությունը՝ ինչն իր հերթին պայմանավորված է հիմնային սուբյեկտների ազդեցիկությունների առկա պատկերով: Մտացվում է, որ կոնտրէլիտայի այն մասը ավելի մեծ շանսեր ունի մեծացնելու իր ազդեցիկությունը, որն ավելի է հակված դիսֆունկցիոնալության: Նման պատկերը խոսում է ՀՀ հասարակությունում առկա համակարգային թերությունների մասին:

**Երրորդ գլխում «ՀՀ քաղաքական էլիտայի զարգացման միտումները, և ներազդման հնարավոր նշանակները»**, ներկայացված է քաղաքական էլիտայի հետագա ձևավորման և գործառության կանխատեսման ֆունը և քաղաքական էլիտայի զարգացման հետագա ընթացքի կանխատեսումը:

**Երրորդ գլխի առաջին ենթագլխում «ՀՀ քաղաքական էլիտայի զարգացման կանխատեսման ֆունը»**, քննարկվում են այն բոլոր գործոնների դինամիկան և հնարավոր զարգացման տարբերակները, որոնցից կախված է ՀՀ քաղաքական էլիտայի հետագա զարգացման գործընթացը: Դասակարգելով այդ գործոններն, ըստ պատճառահետևանքային շղթայում իրենց ունեցած առաջնայնության՝ առանձնացվում են կանխատեսման ֆունի նրբ մակարդակ:

Առաջին մակարդակն այն գործոնների ամբողջությունն է, որոնք պայմանավորում են հիմնային սուբյեկտների ազդեցիկությունները: Այդ թվում նշվում են կոռուպցիան, կլանային համակարգը, ընտրական կեղտոտ տնխնոլոգիաների արդյունավետությունը և այլն: Այս և նմանատիպ գործոնների առկայությունն է ՀՀ-ում հնարավոր դարձրել հիմնային սուբյեկտների ազդեցիկության առկա պատկերը: Եվ այդ գործոնների փոփոխությունն էլ

վերջին 12 տարիների ընթացքում էականորեն ազդել է հիմնային սուբյեկտների քաղաքական էլիտայի ձևավորման և գործառության գործընթացում ունեցած դերի և տեղի վրա:

Կանխատեսելու համար հիմնային սուբյեկտների ազդեցիկությունը, հնդիմակը դիտարկում է կանխատեսման ֆունի առաջին մակարդակը՝ այսինքն, դրանց ազդեցիկությունը պայմանավորող գործոնների դինամիկան և ազդեցության մեխանիզմները: Այդ գործոնների դինամիկան ցույց է տալիս, որ դրանք, ՀՀ անկախացման հետ աճ ապրելով, ունեցել են բացասական հետևանքներ, սակայն վերջին ժամանակահատվածում ունեն կայունապալու միտում:

Կանխատեսման ֆունի նրբորդ մակարդակը հիմնային սուբյեկտների ազդեցիկությունն է և դրանց դինամիկան՝ պայմանավորված ազդող գործոնների՝ ֆունի առաջին մակարդակի փոփոխություններով: Մասնավորապես յուրաքանչյուր հիմնային սուբյեկտի համար առանձնացվում են այն գործոնների խումբը առաջին մակարդակում, որոնք կոնյուսցիայի մեջ են գտնվում առաջինի ազդեցիկության ցուցանիշների հետ:

**Այսպիսով, կառուցելով այս նրբու մակարդակները՝ հնդիմակը** հնարավորություն է ստանում կանխատեսել էլիտայի կառուցվածքում և գործառությունում փոփոխությունները: Այնուհետև անդրադառնալով, թե ինչպես են կանխատեսման ֆունի առաջին նրբու մակարդակներն ազդում էլիտայի նրբորդ մակարդակի վրա՝ հնարավորություն է ստանում կանխատեսել էլիտայի ապագա նկարագիրը: Երրորդ մակարդակն իրենից ներկայացնում է ազդեցիկության ներքին գործոնները, որ ամբողջացնում են էլիտայի նկարագիրը: Այսպիսով, հնդիմակը ցույց է տալիս, թե փոփոխությունները կանխատեսման ֆունի յուրաքանչյուր մակարդակում ինչպիսի փոփոխություններ են առաջացնում մյուս մակարդակներում: Միևնույն ժամանակ քննարկելով առաջին նրբու մակարդակները՝ հնդիմակը մանրամասն նկարագրում է պատմական և սոցիալ-տնտեսական համատեքստը, որի պայմաններում առաջացել է փոփոխվել են այդ գործոնները՝ արդյունքում ապահովելով կանխատեսման համար անհրաժեշտ ամբողջական պատկեր:

**Երրորդ գլխի նրբորդ ենթագլխում «ՀՀ քաղաքական էլիտան 2007թթ. տրենդային և գործոնային կանխատեսումներ»**, ներկայացված է ՀՀ քաղաքական էլիտայի 2007թ.-ի կառուցվածքի և գործառության կանխատեսումը:

Կանխատեսումն իրականացված է նրբու հիմնական մեթոդներով՝ տրենդային և գործոնային, որոնց արդյունքների համադրությամբ ստացվում է կանխատեսման հուսալիության ավելի բարձր մակարդակ: Համադրելով գործոնային և տրենդային կանխատեսումները՝ հնդիմակը ստանում է 2003-ից 2007-թթ. ՀՀ քաղաքական էլիտայի գործառությունը, ձևավորումը և համալրումը պայմանավորող գործոնները, որոնցից և բխեցվում է էլիտայի նկարագիրը:

Մտացված արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ էլիտայի կառուցում և գործունեությունում առկա թերությունները միտում ունեն խորանալու: Մասնավորապես կլանային համակարգի առկայությունը, այլ

էլիտար խմբերի և արտաքին ուժերի բարձր ազդեցիկությունը քաղաքական էլիտայի վրա: Նման պայմաններում ՀՀ քաղաքական էլիտային հատուկ է դառնում դիսֆունկցիոնալությունը, կոնսրվէլիտայի ձևականությունը և այլ բացասական գծեր:

Մասնավորապես, պատասխանելով էլիտայի սոցիոլոգիայի առաջին հարցին՝ պետք է ասել, որ որպես ազդեցիկության ներքին գործոններ և էլիտայի հաջողության գրավական, կարևոր են դառնում այնպիսի գծեր, ինչպիսիք են պոպուլիզմը, ֆինանսական լոբբինգին տրվելու պատրաստակամությունը, գաղափարախոսությունից շեղվելու պատրաստակամությունը և այլն: Մյուս կողմից՝ նախ քան որ ասելու են մղվում այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են քաղաքական իրազեկությունը, հավատարմությունը գաղափարախոսությանը, լիդերության ընդունակությունները և այլն: Սակայն հարցի նրկրորդ մասը՝ ինչպես է հնարավոր, որ էլիտայում առաջնության հատկանիշները լինեն պայմանավորված է այն բանով, թե որ հիմնային սուբյեկտներն ունեն առավելագույն ազդեցություն քաղաքական էլիտայի վրա: Տվյալները ցույց են տալիս, որ որքան մեծ է գիտամշակութային էլիտայի ազդեցությունը, այնքան ավելի այդ հատկանիշները ազդեցիկության ներքին գործոնները, նպաստում են քաղաքական էլիտայի ֆունկցիոնալությանը, հետևաբար, նման հատկանիշներ բնորոշ կլինեն քաղաքական էլիտային: Մտացվում է, որ նրան նպաստակ ընդունենք քաղաքական էլիտայի այնպիսի հատկանիշներով օժտված լինելը, որոնք նպաստեն դրա ֆունկցիոնալությանը, հանրապետությունում պետք է լինի ոչ թե ժողովրդավարություն, այլ մտավորականության իշխանություն: Սակայն հեղինակը սա չի համարում հարցի ամբողջական լուծում որպես նպատակ ընդունելով ոչ միայն քաղաքական էլիտայի նման հատկանիշները, որոնք բխում են էլիտայի սոցիոլոգիայի առաջին հարցից, այլ նաև էլիտայի և կոնսրվէլիտայի ֆունկցիոնալությունը հասարակության համար, որ բխում է նրկրորդ հարցից և ննթադրում է ժողովրդավարություն: Վերջինիս իրականացումը պահանջում է մի կողմից հասարակության լայն շերտերի և գիտամշակութային էլիտայի ազդեցիկության մեծացում և մյուս կողմից դրսի ուժերի, տնտեսական և բյուրոկրատական էլիտաների ազդեցությունների թուլացում:

Նշված խնդիրների լուծման համար հնդինակն առաջարկում է կանխատեսման ֆունի առաջին մակարդակի գործոնների փոփոխման միջոցով ազդել հիմնային սուբյեկտների ազդեցության և ապա նաև էլիտայի հավաքագրման գործոնների վրա: Սակայն պետք է հաշվի առնել, որ այնպիսի գործոնների դեմ պայքարելն, ինչպիսիք են կոռուպցիան, կլանային համակարգը, աղքատությունը, կարճաժամկետ հեռանկարում դժվար լուծելի է: Հետևաբար, ավելի նպատակահարմար է ներագրման գործընթացը սկսել հասարակության կողմից էլիտայի գործունեության վերահսկման մեխանիզմների կառուցմամբ, ինչը ննթադրում է պայքար քաղաքական կնդոտ տնխնոլոգիաների դեմ, հասարակության նախապատրաստում ընտրություններին, քաղաքական էլիտայի հանդեպ հասարակության պահանջների մեծացում և այլն:

*Եզրակացության* մեջ ընդհանրացված են ատենախոսության գաղափարները և հիմնական դրույթները:

Ատենախոսության բովանդակությունն արտացոլվել է ատենախոսի հետևյալ հրատարակումներում.

1. Պողոյան Մ. Պ., Մտավորական էլիտան Հայաստանի ստրատիգիկացիոն համակարգում: // Երիտասարդ գիտնականների հոդվածների ժողովածու, ԵՊՀ, 2000, էջ 125-127:
2. Պողոյան Մ. Պ., Քաղաքական էլիտայի հիմնային սուբյեկտները Հայաստանում: // Ինֆորմացիոն տնխնոլոգիաներ և կառավարում, N 2, 2002, էջ 124-146:
3. Պողոյան Մ. Պ., կառավարող էլիտան Հայաստանում: // Գարուն, N 7, 2002, էջ 16-26:

ПОГОЯН МАСИС ПОГОСОВИЧ

ТЕНДЕНЦИИ ФОРМИРОВАНИЯ ПОЛИТИЧЕСКОЙ ЭЛИТЫ В РА

диссертация на соискание ученой степени кандидата социологических наук по специальности 22.00.03 "Теории среднего уровня, социальные структуры, социальные институты и процессы"

Защита состоится 26 декабря 2002 года в 17.00 на заседании специализированного совета 013, по адресу 375025, Ереван, ул. Алека Манукяна 1, Ереванский государственный университет

РЕЗЮМЕ

О том, какую важную роль играет политическая элита в процессах функционирования и развития общества, может служить тот факт, что еще в древнекитайской философии делались попытки выделить определение элиты, и эти попытки делаются до сих пор. Более того, изобилие различных элитологических теорий и направлений может служить показателем того, насколько сложно и неоднозначно это явление в своих проявлениях, насколько многогранна его роль в общественном развитии.


С этой точки зрения, структурно-функциональный анализ политической элиты, как подсистемы общества, открывает широкий диапазон возможностей систематизации и конкретизации представлений об этом явлении, о его структуре и особенностях функционирования, и кроме того позволяет выделить место политической элиты в целостной модели функционирования общества.

Структурно-функциональный анализ политической элиты Армении позволил выделить определенную группу факторов, обуславливающих ее структуру, функционирование и формирование, невзирая на то, что последняя в нынешнем ее состоянии формировалась на протяжении всего нескольких десятилетий. В ряду таких факторов особое место занимают определенные социальные общности, владеющие ресурсами, чье содействие может иметь существенное влияние на конкретного представителя политической элиты для продвижения его вверх по властной иерархии. В РА в качестве таких общностей, которые мы будем называть базовыми субъектами политической элиты, выступают, с одной стороны, экономическая, бюрократическая, военная, научная и культурная элиты, с другой стороны, местная армянская общественность, кроме того, армянская диаспора, и, наконец, Западные державы и Россия. Реальное влияние на политическую жизнь страны со стороны конкретного представителя политической элиты обусловлено, с одной стороны, тем содействием, которое оказывают ему упомянутые базовые субъекты, с другой стороны, немаловажную роль играют общественные

организации, представители СМИ, и, кроме того, индивидуальная политическая активность данного представителя. Таким образом, имея определенное влияние на политическую элиту, упомянутые базовые субъекты получают возможность диктовать свою волю, определяя тем самым, кто управляет страной с точки зрения собственной выгоды.

Рассматривая механизмы функционирования политической элиты Армении, в первую очередь следует выделить такие базовые субъекты, как экономическая и бюрократическая элиты, а так же базовые субъекты, связанные с определенными внешними силами, имеющие наибольшее влияние на формирование политической элиты. В то же время, научная и культурная элиты, а также общественность имеют несравненно меньшее влияние на политическую элиту. В аспекте демократических преобразований, результатом упомянутого выше положения дел является появление ряда нежелательных последствий, в частности, искажение демократических механизмов функционирования общества. Среди нежелательных последствий можно также отметить дисфункциональность элиты и контрэлиты, несоответствие общественным интересам тех механизмов, с помощью которых происходит формирование политической элиты, и, как результат, направленность функционирования общества в целом на частные интересы определенных субъектов.

Настоящие тенденции формирования элиты показывают, что упомянутые недостатки будут продолжать углубляться в течение ближайших лет, что заставляет обратиться к методам регулирования этих процессов. В частности, следует отметить важность борьбы с такими явлениями, как грязные технологии выборов, пассивность населения в политических процессах, слабые несформированные требования населения по отношению к политической элите и т.п.



ՀՀ Ազգային գրադարան



NL1793140

